


# ՄԿԱՄԻՏ

3

ՊԱՆՏՈՆԱԹԵՐԹ  
Ը.Մ.Ը.Մ.Ի  
ԸԻՄՆԵԱԼ  
1918 թն.



ORGANE

DES SCOUTS ARMEHIENS

FONDE EN

1918



L. Khachaturian 20



# ՀԱՅ ԾԱՊԱՌՈՒՑ

ՊԱՐԱՆՈՒՄԻՆԻ ԳԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԹ

ՀԱՐՍՏՆԻ ԲԱՆՆԵՐԻ ԶՆՆԵՆԻԿ

Հարկեր . . . . .	25 ֆր.
Վարձավճարներ, ժողովուրդներ . . . . .	20 ֆր.
Մյուս քարոզ ծախսերը . . . . .	30 ֆր.

Վերադարձույնի ծախսեր:

ՀԱՅՐ ԶԵՆՈՒՄ 1 ԸՆՏ ֆր.

---

## ՎԵՐ Ի Ե ՈՐ ԳՆ Դ

Մատուցողան Վերջին մերթնոյնն ին «Հայ մկրտութիւն վերաբերեալ դրամ, սպասարկութիւն, մատուց, բարձրագոյն, պարտաւորութիւն, գրեթէ հետեւեալ հասցեով՝


**ՄՐ. M. KURKDJIAN,**  
39, rue Maubeuge,  
PARIS (9<sup>e</sup>).

---


«ՀԱՅ ԾԱՊԱՌՈՒՑ ՊԵՆՆԻՐԵՆՆ» ցանկով պիտի գնենք այն ազնիւ անունները, որոնք մեր թերթը քաջալերելու, եւ ստորածելու համար նիւթապէս կ'օգնեն անոր ծաւալումին, բաժանորդագրուելով սեւէ հայ ազգաբաժնի հաստատութեան մը, կամ վարձարանի մը ի նպատակ:

Թերթիս վարչութիւնը մասնաւոր գեղջ կ'ընէ ազգային բոլոր հաստատութիւններուն, երբ իրենք ըլլան ազգային վճարողը՝ պահանջելով 20 ֆր. տարեկան բաժնեկիւն:





ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ «Հ. Մ. Ը. Մ.»-Ի ԿՆԴՐՈՆ ԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԵԱԼ 1918



# HAÏ SCOUT

REVUE BI-MENSUELLE DES SCOUTS ARMÉNIENS

Fondée en 1918

Գ. ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ - ԹԻԻ 3 - (1-re année. MAI.) ՄԱՅԻՍ 1-15 1934

## ՎԱՂՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Հայ սկաուտական շարժումը բնագա-  
լնդհատ, բայց անշեղ կը քայլ իր պայ-  
ծառ ճանապարհով:

Հեռու՝ գինքը խանդավառող շրջապա-  
ռէն, գինքը ծնող ու իր նեցուկ հայրենի  
բնութենէն, իր առողջ դադարաբաղանու-  
թիւնը ու իր համամարդկային իտէալը  
կը հրահրէ կամքերը իր շարքերուն, կը  
պարտադրէ գոհողութեան մեծամեծ ճի-  
գեր որոնցմէ խուսափող չկայ:

Ու այսպէս, դաժան պայմաններու  
ծնունդ՝ ծանր լուծը, մէկ ուսէն միւսը,  
դեռ չէ լքուած ու չի ալ լքուիր:

Հրատարակելով անգամ մ'եւս «Հայ  
Սկաուտ»ը, մեր նպատակը պիտի ըլլայ  
առաւելապէս, մեր շարքերուն տալ՝ գի-  
տակցութեան, պարտաճանաչութեան,  
անհատական և հասարական ձեռներէցու-  
թեան, ազնիւ և կորովի նկարագրի և  
վերջապէս լուսամիտ հայրենասիրութեան  
մը ոգին, որոնք մասնաւորապէս մեր մէջ  
հեռու եղած են պատուարեր տեղ մը  
գրաւած ըլլալէ:

Այս թերթով մենք ցոյց պիտի տանք  
հայ ծնողաց մեր խղճամիտ դործունէու-  
թիւնը, որը, ունեցած է և պիտի ունե-  
նայ համահայկական բնոյթ, անկախ որ  
և իցէ յարանուանական թէ քաղաքական  
ուղղութենէ:

Ահա թէ ինչո՛ւ, սրտագին կը հրաւի-  
րենք որ մեզ չզլացուի անհրաժեշտ քա-  
ջայերանքը թերթին տեսականութիւնը ա-  
պահովելու համար:

«Հայ Սկաուտ»ը պիտի ըլլայ մեր դոր-  
ծունէութեան հայելին: Եւ Սկաուտական  
շարժումը՝ մեր վաղուան գրաւականն է:

Իրար յաջորդող ներգաղթի կարաւան-  
ները, հայկներէն մեր հեռու մնալուն կու-  
տան ժամանակաւոր երեւոյթ, ու հետե-  
ւաբար ոչ մէկ կազմակերպութիւն կոչ-  
ուած է կատարելու այնքան բարեբար  
դէր մատաղ սերունդի մօտ, որպիսին է  
սկաուտական մօտակայ թէ հեռաւոր նիւ-  
թական շահեր չհետապնդող Միութիւ-  
նը, քաղաքական վարդապետութիւններու  
քարոզչութենէ հեռու ըլլալու իր հանգա-

322-2000



մանքը նուազ կարեւորութիւն ունեցող պարագայ մը չէ հայ կեանքի այս արեւոյտ օրերուն:

Սկառուտական կաղճակերպութիւնը դասակարգային չէ, թողունք որ հայ ժողովուրդը դասակարգեր չունի իր սեփական կեանքին մէջ: Որով մեզ համար դժուարին խնդիր մը չէ այդ պարագան ճշգիւ պահպանման հաւատարմութիւնը:

## ՕՊԱՆՆԻՈՐԴՆԵՐՈՒՆ

Օգանաւորութիւնը, իր ծագումով, նմանութիւնն է թռչնոց գործածած կերպին օդին մէջ ինքզինքնին բռնելու եւ ուղղուելու:

Ինչպէս քայլել կարելի է շնորհիւ գեանին ցոյց առած բնորոշութեան, թրուիչքը իր կարգին հետաւոր է շնորհիւ օդին իր յայտ բերած դիմադրութեան որոշ մակերեսի մը վրայ, երբ սոս յարաբերական շարժման մէջ է: Օդի նկատմամբ, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

Վազուց է որ թռչելու գաղտնիքին լուծումը մարդոց միտքերը պրագեցուցած է. եւ դեռ ոչ շատ ուշ այդ ցնորական կը թուէր:

Երեւակայութիւնը, մարդոց բանաստեղծական ուղին շուտով պիտի ստեղծէր առասպելներ, ոյժի տէր՝ հմայիչ էակներ ու անոնց պիտի վերագրէր թռչելու շնորհքը:

Կրօնները բանաստեղծական զմայլելի երկերով յաւերժացուցին թեւն ու թրուիչքը:

Յոյն դիցարանները թեւեր տուին իրենց շաստուածներէն սիրոյ պատգամաւոր Հերմէսի (Մէրքուր) եւ քերթողներու երիվար Պեղասին:

Աւետարանն ու քրիստոնէութիւնը մարդկային կերպարանաց ներքեւ կը ներկայացնեն հրեշտակները հսկայ թեւերով:

Բանաստեղծին համար, սէրը, գեղեցկութիւնն ու իմացականութիւնը թեւեր ունին: Օրինակ « Հին Աստուածներ » ու հեղինակը Վանահօր եւ Արեղայի մենամարտութիւնը կը վերջացնէ ըսել տալով առաջնոյն՝

— « Ափսոս Արեղայ, քո միտքը երբեմն թեւեր ունէր », որուն կը պատասխանուի՝

Մեր մեծագոյն բաղձանքը պիտի ըլլայ սկառուտական շարքերու մէջ եւ « Հայ Սկառու » շուրջը համախմբուած տեսնել հայ երիտասարդութիւնը, երիտասարդ մտաւորականութիւնը, լծուելու համար հայ ոյժի եւ մտքի ազնուացման դժուարին բայց նուիրական գործին:

ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏ

«L'homme est un Dieux dechu qui se souvient des cieux».

Lamartine

— « Ափսոս Վանահայր, քո սիրտը երբեմն թեւեր ունէր »:



Այս բոլոր երկիւղած տեսիլքները, բանաստեղծութիւնները, երազները ի վերջոյ իրականութիւն դարձան մեր դարուն շնորհիւ ոչ թէ անհատի մը, այլ խումբ — խումբ հաւատացեալ ու անձնագոհ մարդոց պրպտումներուն յանդուգն յաջողութեամբ:



Առանց երթալու մինչեւ Պրոմէթէ որ երկինք բարձրացաւ Արամազդի (Jupiter) կրակը գողնալու, դիցարանութիւնը մեզ թողած է Տետալոսի արկածներուն պատմութիւնը:

Տետալոս Աթենացի ճարտար գործաւոր մըն էր, զսպանակի օգնութեամբ ինքնաշարժ արձաններ կը շինէր, նախանձէն մեղսուց իր եղբոր որդիներէն մին որ իրեն չափ ճարտար էր ու ապաստանեցաւ Կրեաէ կղզին: Հոն իր անունը կրող լաբիւրինթոս մը շինեց որուն մէջ իսկ արգելափակուեցաւ տեղւոյն Մինոս թագաւորի հրամանաւ, ինչպէս նաեւ իր գաւազը Իկար (Icar) , ամբաստանելով հայր ու որդի որպէս թէ իր աղջիկը գլխէ կը հանեն:

Կրտուի թէ Տետալոս հոն իր որդւոյն օգնութեամբ թեւեր շինեց փախչելու համար, թեւերը ամբացուց մեղրամոմով եւ իր դաւկին պատուիրեց ոչ շատ բարձր եւ ոչ շատ ցած թռչիլ: Անխոհեմ եւ յանդուգն երիտասարդը այնքան բարձր սկրսած է թռչիլ որ արեւը հալեցնելով իր թեւերը հաստատող մոմը ձգեց Իկարը Եգէականի մէջ, ծովի այդ մասը կոչուած է Իկարեան ծով:



Գալով Տօրը՝ ան թռչելով հասաւ Սի-  
կիլիա ուր խեղդեցին զինքը, Մինոս թա-  
ղաւորին պատերազմի սպանալիքներէն  
վախնալով :

Կ'ըսուի նաեւ թէ Արքիթաս (Architas)  
անուն նախահայր մը շինած է աղանա-  
կերպ մեքենայ մը որ կը թռչէր :

Այսքանն ի հարկէ անբաւական է եզ-  
րակացնելու համար թէ հիները գիտէին  
թռիչքի մեքենական արուեստը, այսու-  
հանդերձ Տետարոս կը նկատուի առաջա-  
տանալի հնարիչը, իսկ Արքիթաս թռու-  
ցիկի :

Պէտք է յառաջանալ մինչեւ Արիստո-  
տել (322 Ք. Ա.) դռնելու համար զըր-  
ուածքներ թռչնոց թռիչքի մասին : Իր  
« Կենդանեաց քայլի » Բ. զրքին մէջ խո-  
սած է թեւերու շարժման եւ պոչի դերի  
մասին որպէս զեկ, աւելցնելով որ այն  
տեսակներուն մէջ, որոնց պոչը քիչ զար-  
գացած է, ոտքերնին է որ կը կատարէ  
զեկի դերը, օրինակ Արազիլը :

Պլինիոս երէց շատ ամբողջական եւ  
կատարեալ գործեր թողած է եւ հետա-  
քըքրական ծանօթութիւններ կուտայ  
թռչելու վերաբերմամբ : Թռչելու համար  
կ'ընէ Պլինիոս, թռչունը նախ կը ջանայ  
ձեռք բերել որոշ արագութիւն մը, ըլլայ  
ցատկատելով, ըլլայ վազելով կամ բարձր  
տեղէ մը դահավիժելով, միմիայն բազը  
բացատրութիւն կը կազմէ թռչելով ուղղա-  
կի ջրի երեսէն :

Կայիլէոս առաջին անգամ ըլլալով կը  
նկատէ թեւատարած անշարժ թռիչքը :

ԺԱ. դարուն օգանաւարկութեան գա-  
ղափարը մշակուեցաւ Անգլիացի Բենե-  
զիկտեան Olivier de Malmesbury ի կողմէ  
որ 1050 թիւին ձեռքերուն եւ ոտքերուն  
թեւեր կապած աշտարակէ մը ինքզինքը  
վար նետեց թռչելու յոյսով եւ ջախջա-  
խեց սրունքները :

ԺԲ. դարուն Սարակինոս մը ճերմակ-  
ներ հագած եւ նոյնպէս իր անգամներուն  
թեւեր հաստառած թռչիլ փորձելով  
ջախջախուեցաւ Կոմեննոս կայսեր ներ-  
կայութեան :

ԺԳ. դարուն Մեծն Ալպերդ կարեւոր  
գիրք մը գրած է թռչուններու թռիչքի  
բաղաբանութիւն (Fauconnerie) վրայ :  
Ինչպէս նաեւ Բօմէ Պարոն որ գուշակած  
է մեքենական թռիչքի հնարաւորութիւնը  
մարդկային մկանային ոյժի միջնորդու-  
թեամբ :

Քերման Թրեաերիք Բ. կայսրը իր  
զրքին մէջ թեւերը կը փակցնէ երկու մա-  
սերու, ծայրը գործօն, իսկ կեդրոնը կը-  
բաւորական դեր ունեցող ու այս բաժա-  
նումը 1810-ին Cayley Անգլիացին՝ եւ

աւելի վերջ Marey Թրանսայի բնախօսը  
գրեթէ նոյնութեամբ ընդունեցան տար-  
րեր սնուններ տալով :

ԺԵ. դարուն Dante di Perugia շատ  
անգամներ թռչելով անցած է եղեր tras-  
imeneի լիճը եւ ի վերջոյ 1420-ին Ս. Մար-  
կոս եկեղեցիի տանիքին վրայ սրունքը  
կուտրած :

Leonardo da Vinci մարդկային  
մեծագոյն ներկայացուցիչը, ծնած 1445-  
ին Ֆիլիքենցէի մէջ առած է բոլոր տեսակի  
թռիչքներու կատարեալ տեսարանութիւ-  
նը : Իր ինքնատիպ տեսութիւնները ծան-  
րութեան կեդրոնի, առաձգականութեան,  
օդի ընդգրկմութեան, հաւասարակշու-  
թեան, պոչի դերի մասին, անթեւահար  
թռիչքի պահուն հողի դերի մասին, արդի  
օդանաւորը ճարտարագէտներու համար  
իսկ շահեկան է. Da Vinci որ թողած է  
նաեւ դժագրութիւններ այժմ պահուած  
Միլանոյի Ամբրոսեան գրադարանի մէջ :  
Իրեն կը վերագրեն նաեւ օդային պատ-  
տակի եւ պարուրաթեւի կամ պաուտա-  
կաթեւի (Helicoptere) գաղափարին տե-  
սականը :

Սակայն, հետագայ դարերուն ալ  
եղած բոլոր փորձերը որոշ եզրակացու-  
թեան մը յանգած չըլլալուն, հետզհետէ  
թռչող մեքենային գաղափարին իրազոր-  
ծումը մէկգի կը թողուէր :

Ու օր մըն ալ 1783-ին ի  
օդապարիկը եկաւ ամէն կողմ հրահրելու  
գիտուններու երեւակայութիւնն ու ժողո-  
վրդական խանդավառ հիացումը այս  
չրճանին իսկ օդին տիրապետելու յաւակ-  
նութիւնները սկսան հող գտնել :

Մարդկութիւնն ունէր արդէն օդի մէջ  
կարենալ մնալու միջոցը առանց մեքենա-  
կան որ եւ է ոյժի, պէտք էր ուրեմն աշ-  
խատիլ ու փնտռել օդապարիկները վարե-  
լու, անոր ուղղութիւնն տալու միջոց-  
ները :

Ուսուցիկներու երեւումը եկաւ տա-  
րակարծելու գիտունները, թէ եւ մեքենա-  
կան թռիչքի կողմնակիցները չվհատեցան  
ու անգործ չմնացին : Այսպէս ծնունդ տրը-  
ուեցաւ երկու գլխաւոր բաժանումներուն

Ա. Օդէն թեթեւ գործիքներու, օդա-  
պարիկ, ձեփլին, եւն .

Բ. Օդէն ծանր, ներկայացուած երեք  
տեսակի գործիքներով .

- 1) Թռչնաթեւք (Ornithoptères)
- 2) Պարուրաթեւք (Helicoptere)
- 3) Օդաքեւ (Aeroplane), , սաւառ-  
նակ (Avion), , ջրօդանաւ (Hydravion)

Յաջորդով պիտի բացատրենք թէ ինչ-  
պէս կը թռչի օդանաւը :

ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ



# Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Անձնուէր մօր մը վիշտէն  
Գեղեցիկ յոյսեր կը ծնին:

Ընտանիք ...  
Ի՞նչ ազնիւ զգացում գորովի ու  
քաղցրութեան:

Եւ ի՞նչ համեստ հանդիսարան սար-  
տականութեան ու զրհսզութեան:

Նաւահանդիստ խաղաղութեան՝ սի-  
րոյ եւ յոյսի լայնածաւալ ովկէանին վը-  
րայ:

Ամէն անգամ որ արտասանեմ այս  
սիրուն բառը, յարգանքի խօր զգացում  
մը կը յուզէ պահ մը հոգիս: Որովհետեւ  
կը յիշեմ տուայտանքի բայց եւ այնքան  
քաղցր այն օրերը երբ իմ բարոյական ու  
իմացական զարգացման նախնական կազ-  
մութիւնը տեղի կ'ուեննար անզգալարար  
ու դանդաղօրէն այս նուիրական եւ խոր-  
հրդաւոր հաստատութեան մէջ:

Այո՛, ընտանիքը այն առաջին ու  
խորհրդաւոր հաստատութիւնն է մարդ-  
կային ընկերութեան որ կը սուզուի յա-  
ւերժութեան խորը:

Ան ընական ընկերութիւնն է: Սկիզբ  
ու նախասաղմ բոլոր կաղմակերպուած  
ընկերութիւններու:

Անոր գոյութեամբն է միայն որ ան-  
հատը կը յաւերժանայ: Որովհետեւ, ինչ-  
պէս որ ան կը սուզուի անցեալի խորու-  
թեանը մէջ շնորհիւ իր նախնիքներուն,  
նոյնպէս ան տէր կը դառնայ ապագայ  
վե՛հ ճակատագիրներու, նոր եւ յաջոր-  
դական սերունդներու միջոցով:

Անոր գոյութեամբն է որ մանուկը կը  
ստանայ բարիքները իր կեանքի արշալոյ-  
սին: Անոր հութեանը մէջն է որ պատա-  
նին կը դանայ երաշխիքը յոյսին եւ հա-  
ւատքին: Անոր միջոցով է որ երիտասար-  
դը կը նետուի վստահութեամբ կեանքի  
կրկէսը դառնալու համար նկարագրի տէր  
ազնիւ քաղաքացի մը:

Ընդհանուր պատմութիւնը կուզայ  
ապացուցանելու թէ բոլոր հօր ազգերը  
հիմնուած են ընտանիքի օրինաւոր ու բա-  
բոյական ուժեղ կազմութեան մը վրայ:  
Եւ երբ այս կազմութիւնը սկսած է տկա-  
րանալ, ազգեր նոյնպէս կորսնցուցած են  
իրենց հրամանատարութեան գիրքը եւ  
զգալարար ենթարկուած՝ քայքայման ու  
անհետացման:

Ընտանիքը կազմելով մէկ կարեւոր  
մասը հայրենիքին, մեզի կը ներկայանայ  
նոյնքան մեծ արժէքով որքան մեր մեծ  
ընտանիքը, հայրենիքը, կը ներկայանայ  
իր ամբողջութեանը մէջ: Այս երկու նուի-  
րական անունները, ընտանիք ու հայրե-  
նիք, կազմելով նոյնքան քաղցր, ազնիւ ու  
վսեմ ներդաշնակութիւն մը մեզ համար  
ինչպէս է նաեւ բոլոր քաղաքակիրթ ժո-  
ղովուրդներուն, արժանի են յաւէտ մեր  
կատարեալ գորովին ու յարգանքին:

Ընտանիքին մէջն է որ նախ կը գործա-  
դրուին գլխաւոր առաքինութիւնները  
մարդուն եւ քաղաքացիին: Հոն է որ ի  
յայտ կուգայ ու կը զարգանայ գեղեցիկ  
զգացումը հայրենասիրութեան:

Մասնաւոր ու ընկերական կարգերու  
իրաւունքներ եւ նաեւ ինչպէս երկրի մը  
գերազոյն շահը կը գործակցին հաստա-  
տելու կարեւորութիւնը այն զգացումին  
որ կը ծնի միայն ընտանիք գաղափարէն:

Նախ, ի՞նչ է այս ընտանիք գաղա-  
փարը, եւ ինչի՞ մէջ ան կը կայանայ:

Ընտանիք գաղափարը, կամ աւելի  
ճիշդ, ընտանեկան օգին կաղմուած է այն  
լուսազոյնէն որ ընտանեկան կեանքը կըր-  
նայ արտադրել, թէեւ այս լուսազոյն ար-  
տադրութիւնը հազուադիւր եղած ըլ-  
լայ:

Ընտանեկան օգին ուրեմն այն միջո-  
ւորապէս կութիւնն է հիմնուած անձ-  
նուիրութեան, միարանութեան ու բարե-  
սիրութեան վրայ որ կը սնուցանէ ան-  
խտրաբար ընտանիքին բոլոր անդամ-  
ները:

Անով ու միայն անով է որ ի յայտ  
կուգան եւ կը զարգանան նկարագրի բո-  
լոր գիծերը, որոնք այնքան անհրաժեշտ  
են մարդկային յառաջգիւղութեան հա-  
մար:

Անիկա, միւլտոյն ժամանակ, գիտա-  
կից ու մտածեալ արտայայտութիւնն է  
արիւնակցութեան:

Այս պատճառով, ան ունի միջին ու  
ընազդական հիմ մը նախ քան ստանալու  
բանաւոր ձեւ եւ խօսելու մեր իմացակա-  
նութեան: Եւ այս միջին հիմը որ կ'ամբողջ-  
ջացունէ մեր գեռ ընացած մտածութիւ-



նը, կը մնայ միեւնոյնը երբ զիտակցութեան արձնանք ժամանակի բերումով:

Անոր զգացումները աւելի զօրեղ են քան կամքը եւ բանականութիւնը, աւելի տարածաւալ՝ քան տարածութիւնը խօսքի գեանին: Անոնք կը վերանան մերձաւորելու խորհրդաւոր ու նուիրական խորութիւններ, ուր էականը կը վերակապուին յաւիտենական անսահման էութեան:

Պատմութիւնը կ'ըզայ անգամ մը եւս ցոյց տալու եւ հաստատելու թէ ընտանիքին ձեւը միշտ փոփոխական է եղած: Ան տարբեր էր սկզբնական շրջաններուն, յառաջդիմութեան զարազուիւններուն եւ քաղաքակրթեալ ընթացքներուն: Եւ նոյնպէս այդ ձեւը ենթարկուած է շրջան առ շրջան պատմական կազմակերպութեան խոր ազդեցութեան, որուն ծոցին մէջ ստանալով պէտք եղած ծաւալը, զարգացած է յամրաբար:

Սոր տարբերութիւններ եւ ազնեւեւ հակադրութիւններ կը գտնեն աւատական ընտանիքը, հետը ունենալով իր անդրանկութեան իրաւունքը, այժմեան ընտանիքէն, բազմամուսնային ընտանիքը միամուսեան ընտանիքէն: Սակայն այս բոլոր ձեւերուն ներքեւ կայ որոշ բան մը որ անժխտելիօրէն անփոփոխ է: Ասիկա արեւակցութիւնն է: Հայրերու եւ զաւակներու միջեւ, ինչպէս նաեւ եղբայր եղբորը հանդէպ, եղած վերաբերումները կրնան տարբերիլ, բայց այս բոլոր փոփոխական մակերեւոյթներէն ի յայտ կուգայ այն ինչ որ անփոփոխելի է, այսինքն արիւնի բնական կապը, որ թէեւ

անձանօթ ու խորհրդաւոր է, բայց եւ այնպէս զգալի կը դարձնէ բնական զօրութեան ազդեցութիւնը իր հետ աննշութիւն հաստատող էականերուն ինչ որ ալ եղած ըլլան վարձքերն, օրէնքներն, ժամանակի այլ եւ այլ ընթացքներն ու ընկերական գասաւորումները:

Ընտանեկան զգացումին խորութիւնը եւ նաեւ անոր զօրութիւնը համեմատելի են բնութեան թաքուն ուժերուն: Թէեւ կը տեսնենք անոնց բարերար կամ քանդիչ ազդեցութիւնները, բայց եւ այնպէս չենք կրնար գանոնք շափել եւ կամ արգիլել: Չկայ դեռ երկրի վրայ ոչ մէկ կրչի ու գնահատելու համար այն ինչ որ մարդկութիւնը դրած է շրջան առ շրջան իր երջանկութեան եւ նաեւ յուսահատութեան պահերուն, — հա՛յր, մա՛յր, քո՛յր, եղբա՛յր, զաւա՛կս:

Երբ կը խօսինք այսպէս ընտանեկան ոգիին եւ ընտանեկան զգացումներուն վրայ, մենք կը հասնինք ուրեմն մինչեւ խորը կեանքին, սկիզբը էութեան: Ինչ որ աւելի հին է, աւելի անջնջելի, միեւնոյն ատեն աւելի նոր եւ յեղադէպ:

Որքան որ այս զգացումները մեզ լեցնեն երանութեամբ եւ կամ մեզ տառապեցնեն անդուլ ցաւերով, անոնք իրականին մէջ սա տարբրինակ յատկութիւնը ունին որ անհաղորդական ըլլալով երբեք բացատրելի չեն:

ՎԱՀԱՆ ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆ  
( Շարունակելի )

Ապագան վտանգուած հայ ժողովուրդը նորանոր աղէտներէ խուսափել տալու համար պէտք է անոր սորվեցնել բարձր հայրենասիրութիւնը:

Վարդ ինչպիսի՞ օ հայրենիք կ'ունենանք մենք: Այնպէս ինչպէս ո՞ր կը կառուցուի Հ.Մ.Ը.Մ.ականի, Հայ Սկաուտի մտքին ու հոգիին մէջ:

Քոյր Սկաուտ, դադրէ եւ դադրեցուր քո քոյրերը քախծութեան, լացի ու ողբի մայր ըլլալէ:

Քոյր Սկաուտ, քո միջոցաւ է որ սիրտի հոգեփոխեմք հայ ընտանիքն ու Հայութիւնը:





# „ՀԱՅ ՍԿԱՌԻՏ“ Ի ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒՆ

Ընդհանրապէս «Հայ Սկառու»ի յօդուածագիրները նոր ուժեր ըլլալով, իմ խօսքս անոնց ուղղուած է, փափաքելով որ մեր թերթը, Ֆիզիքական եւ բարոյական առաքելութեան հետ ունենայ նաեւ հետզհետէ ուռճացող, մտաւոր մակարդակ մը:

Նորեկ գրողներէն ոմանք, հոգեկան մեծ տանջանք կ'ունենան, երբ թնրթի մը կամ լրագրի մը յօդուած պիտի տան, նախ անխուսափելի կերպով կրրոնուի մեծ մեծ բաներ ըսելու յաւականութենէն, չեն հաւնիր սարդ խօսքերուն եւ իմաստներուն, որով հակառակ իրենց խանդին, երեւակայութեան եւ թարմ գաղափարներուն, ուռուցիկ եւ իմաստակ ոճով կը բացատրեն իրենց միտքը:

Ուրիշներ ի սպառ կը հրաժարին գրիչ բռնելէն, առաջարկելով թէ բնաւ յարմարութիւն չունին բան մը գրելու. ես կը կարծեմ որ ամէն մարդ կարող է գեղեցիկ գրել, երբ ճանչնայ ինքզինքը, տրամադրութիւնը ու հոգեկան կազմը: Ինչպէս առանց ծաղիկի մարդագետին չկայ, այսպէս առանց գեղեցիկ գաղափարի մարդ չկայ: Խնդիրը իր ներքին կազմին համեմատ նիւթ գտնելն է. որովհետեւ կ'ուզեն գրել այն որ չունին, չեն զգար:

Թէ մէկ եւ թէ միւսը գրողը, ժամերով կը գրեն, կ'աւրեն, նորէն կը գրեն, շնաչխարհիկ գաղափարներ փնտռելու համար, ու ամենէն վերջը կը գրեն այն որ առաջին անգամ խորհած էին:

Որ եւ իցէ նիւթ մը լաւ գրելու համար պէտք է գայն լաւ ճանչնալ գէթ իր կարեւոր մասերուն մէջ. « մի' գրէ՛ք ինչ որ չէ՛ք գիտեր »: Նիւթին վրայ որոշ գաղափար կազմելէն վերջ նիւթապէս թուղթի վրայ փոքրիկ տրամաբանական ծրա-

դիր մը յօրինել: Սկսել գրել ինչ որ միտքը կը թելադրէ, յետոյ գանոնք ծրագրին համեմատ դասաւորել. կտրել աւելորդ մասերը պարզել գաղափարները: Անպոթեպէք ամենագեղեցիկ գաղափարին ալ եթէ տեղին չի յարմարիր:

Ջանալու է ուղղակի նիւթին վրայ անցնիլ, երկայն յառաջարաններ, աւելորդ լուսարանութիւններ չտալ: Որ եւ է գլուխեան մէջ սարգութիւնը առաջին շնորհն է: Ճշմարտութիւնը իր մերկութեան մէջ աւելի ազդու է քան մանուածապատ դարձուած քներով: Արեւելցիները քնդհանրապէս անժուժկալ ենք մասնաւորապէս ամականներու մէջ, եւ անխնամ քերականութեան:

Ածականներու առատութիւնը մտքի աղքատութիւն կը նշանակէ. մէկ ամականէն աւելի մի' դնէք երբ երկրորդը բան մը չաւելցներ: Ամէն ամական իր տեղը գնել իմաստին եւ վայելչութեան համար. պէտք չէ գրել սարսափելի գեղեցկութիւն եւ ոչ հիւանալի ոսիր:

Ածականներէն վերջ ուշ գնելու է, սեղմ բացատրութիւններու. գրութեան մէջ ամենէն վախճալի բանը երկայնարանութեամբ ձանձրացնելն է, եւ դժբախտաբար հայ գրողներու թոյլ կողմերէն մին է այս: Լաւ գրող մը իր միտքը պէտք է խնամուած ոճով բացատրէ, բառերը ընտրուած, այլարանական սլափերներով եւ գեղեցիկ դարձուած քներով համեմուած: Ամենէն լուրջ նիւթին մէջն ալ գեղեցիկ ոճ գնելը ընթերցողին մեծ հաճոյք է:

Յօդուածը գրելէն վերջ շատ անգամ գայն կարդալու է եւ եթէ կարելի է երեք չորս անգամ օրինակելու է նոյն բանը. ընթերցումը նոր նոր գաղափարներու



չլթաներ կը քաշէ, գրութիւնը տրամաբանական ուղղութիւն կ'առնէ, կը սըրբազրութիւն անհարթ բառերը, կրկնութիւնները եւ կը սարգութիւն մթութիւնները:

Յօդուած մը թերթին զրկելէն առաջ ուշադրութեամբ կարդալ, փոքրիկ անձրչաութիւնները սրբազրելու համար: Նախ գրելու է մեծ թուղթի վրայ մէկ էջով, գրերը որոշ եւ ընթեանելի, մանաւանդ յատուկ անունները, եթէ չէք ուզեր թերթն ալ, ձեզ ալ տհաճելի հրատարակութեան մը գոհ ընել:

Այն բառերը որ կ'ուզէք շեշտուին,

կամ աչքի գարնեն, կամ օտար բառեր են հայերէնով գրուած, տակը մէկ զիծ քաշեցէ՛ք, իսկ եթէ սխալ գրութիւն մեծ տառերով, երկու զիծ:

Նոր տողով սկսուելիք զլիսաւոր նախադասութիւնները լուսանցքէն ներս գրելու է:

Աւելորդ է ըսել թէ կէտերուն եւ ուղղազրութեան մեծ հոգ տանելու է:

Յօդուածները թերթին մէջ դասաւորելը ըստ պատշաճութեան, համաուօտել կամ սրբազրել, կամ մերժել, խմբադրութեանց սրբազան իրաւունքն է:

## ԽՄԲԱԿԱՅԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Իմ 5-6 տարուայ սկսուտական կեանքիս ընթացքին ամենամեծ պակասը որ զխոնջի մեր մէջ, այն է՝ խմբակային գրութեան սխալ ըմբռնումն ու գործագրութիւնը:

Ի՞նչ է խմբակը:

Խմբակը 5, 6, 7 տղոց խմբաւորում մըն է, որ կը կառավարուի առաջնորդի մը ու այս վերջինիս բացակայութեան՝ փոխ-առաջնորդի մը կողմէ: 5-7 տղայ լաւ թիւ է, նոյն իսկ անյարմարութիւն չկայ աւելի քիչ ըլլալու: Լաւ է ունենալ 5 տղայ, որոնք հասկցած են սկսուտից մը եւ կրնան լաւագոյն կերպով կատարել տրուած աշխատանք մը քան թէ 8-9 տղաք որոնք չեն զխտեր քիչ ընելին:

Առաջնորդը կ'ըլլայ յաճախ աւելի տարեց եւ աւելի կարող քան թէ միւսները: Կարող ըսելով զխտուն չհասկնանք:

Պէտք է որ ան ունենայ բնականէն այն բարոյական ազդեցութիւնը հրամայելու համար, որպէսզի իր տղաքը մղէ աշխատանքի եւ խաղի: Առաջնորդ մը ըլլալու համար պէտք չէ որ շատ երիտասարդ ըլլայ, ասով միասին ըսել չեմ ուզեր թէ 13 տարեկան առաջնորդ մը կարող չէ 16 տարեկան առաջնորդի մը չափ աշխատանք տանիլ:

Տարեցները շատ անգամ իրենցմէ երիտասարդներուն չին հնազանդիք, նոյն իսկ եթէ ան իրենցմէ աւելի կարող է, բայց երիտասարդները իրենցմէ աւելի տարեցներուն հրամաններուն կ'ենթարկուին նոյն իսկ եթէ ան ըլլայ քիչ մը հաստամիտ, վերջապէս դնդերներն ալ որոշ զեր կը կատարեն:

Խմբակներն են որ կը կազմեն խումբին էութիւնը. ուրեմն քանի խմբակները ըլլան ճարպիկ եւ լաւ կրթուած իրենց ամբողջութեան մէջ, այնքան խումբը կ'ունենայ փայլ եւ կեանք:

Որով առաջնորդներն են խումբին յառաջադիմութեան կամ լուծման իսկական պատճառները. հետագային սխալ աւանուի թէ ինչո՞ւ համար:

Երբ նոր խումբ մը պիտի կազմուի ահա քէ ինչպէ՞ս գործի ձեռնարկել:

Նախ եւ առաջ նկատի կ'առնէք թեկնածուներու ցանկը, կը գատէք 6-7 հոգի որոնք միւսներէն աւելի ջերմ փափաք յայտնած են եւ որոնց տարիքը կը հասնի 14-16ի: Սկիզբները, չխրտչեցնելու համար, անոնց կուտաք աւելի խաղ քան թէ սորվելիք, որովհետեւ կրնայ պատահել որ այս վերջինները սկսուտական խաղերէն հրապուրուած է որ ձեզի զիմեն, ա-



պա կամաց կամաց անոնց կը բացատրէք թէ ի՞նչ կը սպասէք իրենցմէ, թէ ի՞նչ է սկառուտիզմը, թէ դուք եւ սուրբայ կազմուելիք խումբը մասնաւոր աջակցութիւն մը կը սպասէք իրենցմէ: Վերջապէս իրենց հոգիին մէջ կը ներմուծէք պատասխանատուութեան սոցին: Երբ որ արդէն կը հասնին առաջին կարգի քննութեան, կը սկսիք խումբին կազմութեան բայց մինչեւ այն ատեն ըսենք որ էթէ 1-2 հոգի հետանան յուսախարուած, ձեզի կը մնայ

4 հոգի, այն ատեն թեկնածուներու մէջն կը դատէք առժամապէս 8-10 աւելի արթուն եւ աւելի խմոր ունեցողները, անշուշտ, որքան կարելի ըլլայ, կը բաժնէք երկու խմբակի՝ ճական կամ 7ական հոգիէ, եւ ձեր պատրաստած տղաքները կը կարգէք առաջնորդ եւ փոխ-առաջնորդ իրենց կարողութեան համաձայն:

ԳԻԻՐԻԻՄԻՎԱ

(Ի տրուակելի)

## ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏԸ

### Ս. Գ Է Ո Ր Գ

#### Պատմութիւն

Հի՛ն, հի՛ն, շատ հին ժամանակ երբ թագաւորներն ու իշխանները, իրենց ազգեցութիւնը կորսնցուցած, անիշխանութիւն, սարսափ եւ անօրինութիւն կը տիրէր Եւրոպայի ու Փոքր Ասիոյ մէջ, արի, վեհանձն ու բարի մարդիկ, տեսնելով այդ անարդարութիւնը, հաւաքուեցան եւ հիմնեցին Ասպետներու Եղբայրութիւնը: Այդ տեղի կ'ունենար մօտաւորապէս 1400 թուականներուն:

— Ի՞նչ էր Ասպետին նպատակը:

— Իր ձիուն վրայ հեծած, կարել լինու անտառ, քաղաք ու գիւղ, անցնիլ գետեր, լճեր ու ծովեր, ամէն տեսակ դժուարութեանց, նոյն իսկ մահուան դէմ կռուելով, զինուած ոտքէն ձինչեւ գլուխը, պողպատով ծածկուած կուրծքին վրայ կը կրէր հաւատարմութեան նշանակը, եւ անվախօրէն կը նուիրէր այդ կուրծքը, պաշտպանելու համար իր Աստուածը, հայրենիքը եւ ամէն ինչ որ սէր, նշմարիտ եւ բարի էր, ձեռքը պողպատեայ ձեռնոցներով, կը հասնէր ամէն տեղ, ուր որ օգնութեան պէտք կար: Եւ չզրտէր թէ ի՞նչ է յոգնութիւնը:

Իր աջ ուսին եւ բազուկին ձիւղ մէջտեղը կը կրէր օսկեայ թեւոց մը, որը ցոյց կուտար, այն ամէն սպառնեցումն, դժբաղդներուն, որբերուն եւ հալածուածներուն թէ ինք եղբայր ու բարեկամն է, ամէն անոնց որ արդարութիւն ու նշմարութիւն կը փնտսեն: Տկարնե-

րը, մանուկները, անպաշտպանները, կը հրճուէին Ասպետին ձին տեսնելով, ան բարեացակամութեան նշանն էր, որ իր փոնքտոււմովը, առանց նկատի առնելու իր տիրոջը ու նրա զրահներուն ծանրութիւնը, հոգարտօրէն կ'ուզէր ըսել « Ահա՛, ես եմ որ կը կրեմ արդարութեան, ճշմարտութեան ու բարութեան ասպետը »:

Օրուայ անթիւ բարիքներէն վերջ, երբ երեկոյին, բանակուածի կրակը կը վառէր, թափառական ասպետը, իր քաջ ու ազնիւ ընկերը (ձին) մօտը կանչելով, զգուանքներ կ'ըմբռնէր անոր, որովհետեւ ասպետը կենդանիներուն ալ բարեկամն էր: Իր հուժկու ու զօրաւոր, մետաղեայ զրահով պատուած սրունք ու ոտքերը, կարգապահութեան եւ հնազանդութեան նմոյշներ էին, որովհետեւ իր բարի կամքին ամէն մի հրաման կամ բաղձանքները, շուտով կը գործադրէին: Ինչպէս, ասպետը կարգապահօրէն կը հրատարակէր իր պետերուն: Աջ ձեռքին, ան ունէր իր նիզակը, քաջութեան ու յանդրգնութեան իր նշանակը, որը յաճախ, յաղթանակներ կը պարգեւէր երէկ, անօրէն աւազակներուն, եւ ան ժամանակուայ կեղծ ասպետներուն դէմ, որոնք տկարները կը բնաջնջէին, կը կողոպտէին ու կեանքի խոր անտառին մէջ ճիւղազային կեանք մը կը վարէին: Իսկ ձախ ձեռքով ձիուն սանձը հաստատ բռնած, կը թուլացնէր միայն այն ատեն երբ կոխը վեր-



ճացած ու թշնամին պարտուած էր: Իր ձրուն կազմը թէպէտեւ հինցած, երկար ճամբորդութիւններէ եւ արդարութեան համար տարած կոխներէն, իր ձեռքերովը միշտ կը նորոգէր եւ մետադները կը փայլեցնէր, որովհետեւ Ասպետը աշխատասէր, տնտեսող ու հեռատես էր, ան չէր նմաներ պաշտական ասպետներուն, որոնք շտաշարար կը ծախսէին հինցած դործիքները նորերով փոխարինելու, եւ կը նախընտրէր իր դրամը ծախսել, թըշուառներուն ու ծերերուն օգնութեան հասնելու: — Իր պողպատեայ հազուստին ներքեւ, երբ հանդչելու համար կը հանուէր, կը տեսնուէր, սակեայ թելերով հիւսուած երկրորդ վերարկու գրահը (Cotte de Mailles), ատոր տակն էր որ կը պահէր իր ամենաթանկ հարստութիւնը, գանձը, որն էր իր ՍԻՐՏԸ, հետո՛ւ ամէն ստոր նկատումներէ, շնորհիւ անոր, ո՛չ մէկ ամօթալի բիծ ստացած էր իր կեանքի ճանապարհը, մաքուր էր ան խօսքով, գործով ու մտածումով՝ Մասիսի գարնանային ջինջ ու աստեղագարդ երկնակամարին նման: Հոն, այդ երկնքին տակն էր որ ծնած էր ան Սուրբ Գէորգը, ճշմարտութեան ու արդարութեան Ասպետը, որ իր նիզակի մէկ հարուածով, եօթնադուխ հրէջն անգամ սպաննած էր, ազատելով ճիւղերն ճիրաններէն, դեռաաթ

ու տկար հէզ կոյսի մը կեանքը: Իր նման քաջ ու ազնիւ ասպետներու կեանքէն է որ մեր նոր օրերու ասպետներու, սկաուտներու, խոստումն ու դաւանանքը կերտած է Պէյլըն Բաուէլ, եւ այսօր աշխարհիս չորս հոգիներուն 50 ազգերու պատանիներ կը կաղապարուն անոնց նման, դառնալու համար հաւժու, արդար ու օգտակար վաղուայ քաղաքացիները:

Սկաուտները, օրինակ աննելով ասպետներու կեանքը իրենց պահապան (Patron) ընտրած են Սուրբ Գէորգը, որուն տարեդարձը 23 Ապրիլ ամէն տարի, անփոփոխ, կը տօնեն մեծ հրճուանքով ու երկիւղածութեամբ աշխարհի հինգ մասերու, բոլոր սկաուտները, առանց խտրութեան: Աւստի սիրելի սկաուտ եղբայրներ, որ դժբաղդարար աշխարհիս չորս հոգիներուն ցրուած Ասիայէն Եւրոպա, Աֆրիկէէն Մծերիկա, ի սրտէ կը մաղթեմ որ, ամէնքդ ալ հետեւիք Սուրբ Գէորգի օրինակին, ամէն տարի այդ թըւականին յիշելով ու տօնելով անոր օրը, պատշաճօրէն եւ զստահ եմ որ օր մը, մեր սկաուտները, կատարեն այդ տօնը մեծ հանդիսութեամբ, Սուրբ Գէորգի ծննդավայրը ի Հայաստան:

ՇՐՋԱՀԱՅԵՍԱՅ ԵՂՋԵՐՈՒ

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԵՐԻՆ ՄԱՐՄՆՈՅ

« Հ. Մ. Ը. Մ. »-ի Սկաուտ Վերին Մարմինս իր 22 Ապրիլ նիստին մէջ որոշեց՝

- 1) Սկաուտի խումբերու հաւաքական վարձատրութեան համար հաստատել երեք պատույ դրօշներ:
  - Ա) վահագնեան դրօշ՝ շրջաններու համար:
  - Բ) Բագրատունեանց դրօշ՝ տեղական խումբերու համար:
  - Գ) Անդրանիկի դրօշ՝ խմբակներու համար:
- 2) Պատույ դրօշակներու ձեւին, վարձատրելու եղանակին մասին պատրաստել համապատասխան օրինագիծ մը:
- 3) Պատույ դրօշներու պատրաստութիւնն ու անդնագործումը կատարել հայուհիներու ձեռամբ, բացառապէս:

- 4) Պայճանեան երկիրներու համար « Հայ Սկաուտ »-ի արժէքը նշանակել՝
  - Ա) Ռումանիա 5 լէյ:
  - Բ) Պուլկարիա 5 լէվա:
  - Գ) Յունաստան 5 տրախմի:
- 5) Ամառուայ ընթացքին հանդիսաւոր կերպով տօնել Հ. Մ. Ը. Մ. — Նաւասարդեան տօնը, ապահովելով Ֆրանսայի բոլոր բոյր Մ-նիւղերու մարզիկներու ու սկաուտներու մասնակցութիւնը:
- 6) Մայիս 13-ին հոգեհանգստեան պաշտօն - արարողութիւն կատարել Փարիզի Ս. Յովհաննէս Հայոց Եկեղեցույ մէջ, ի յիշատակ Հ. Մ. Ը. Մ. ական նահատակներուն, օտարութեան մէջ մեզմէ անդարձ հեռացողներուն:

Հ. Մ. Ը. Մ.  
ՍԿԱՌԻՏ ՎԵՐԻՆ ՄԱՐՄԻՆ



# Թ Ո Ռ Ն Ի Կ

Գիշերուան թանձր վարագոյրը կը բացուէր, բոցալառ արշալոյսը ամենէն առաջ կ'ողջունէր Առաքինբերդը, Սասնոյ կատարներուն վրայ:

Պահակի մեկամաղձոտ փողը իր արեւելեան մեզմ' թրթռացումներով կ'իջնար դեռ մշուշոտ ձորերուն մէջ. կը բարձրանար լեռնէ լեռ եւ հուսկ հեռուններում կը նուաղէր:

Սմէն առտու լեանցի, դաշտեցի դանդակներուն հետ կ'աղօթէր եւ հոգարա աչքով կը նայէր իր բերդին ուր թշնամին ոտք չէր կոխած, քանի դեռ Մամիկոնեան արծիւներուն բոյն էր:

Պահակը դանդաղաքայլ կ'երթեւեկէր բերդին երկաթէ դրան առջեւ. բարձրագոյն աշտարակներու վրայէն դէտը ուշի ուշով կը գնէր մինչեւ հեռունները:

Արեւը հեռզհեռէ կը ջերմանար, հորիզոնը կ'ընդարձակուէր, վարերէն ցորեննարարձ սայլերը կը ձոնչէին, Մեղրագետը անխոտ կ'ընթանար կասոյցա գօտի մը կապելով Թոյթ լեռներու լանջքին:

Կէս օր էր, յանկարծ անսովոր փող մը հնչեց դիտարանէն, ահազանդի պէս բան մը սարսեց կամարները, զէնքերով զօրականներ պատրաստ կեցան երկաթապատ դրան առջեւ:

Շատ վարէն տեսնուած էր սպիտակ մեծ դրօշակ մը եւ գոյնզգոյն բազմութիւն մը որ յողնած քայլերով վեր կը բարձրանար, երբեմն երեւնալով երբեմն կօրսուելով ձորերուն մէջ:

Մէկ մղոն հաղիւ կար բերդն հասնելու, անոնց դրօշակին վրայ որոշ տեսնուեցաւ սակի Պաշ մը որ աւելի վստահութիւն ներշնչեց:

Հայ զինուորներու շոկատ մը կ'ընկերէր երեք փաթթոցաւորներ, որոնք հարուստ մուշտակներով, ապրեչումէ կամարով եւ ահանախու թրով մեծ թագաւորի մը զեապանները կը թուէին ըլլալ:

Բերդապահներու մէջէն, բարձրահասակ եւ թարմ օրերով երիտասարդ մը, մօտեցաւ եկուորներուն իր իշխանին սղ-

ջոյնը ապու. զեապանները վար իջան ձիերէն եւ խկոյն մետաքսեայ լաթի մը մէջէն հանեցին Սուր մը, Աւետարան մը եւ Մագաղաթեայ գլան մը ուր գրուած էր դալասեան նպատակը: Մեծ բակին մէջ աղմուկն ու զէնքերու շաշիւնը թնդաց, քարէ սանդուղներէն առանց զէնքի վեր բարձրացան երեք պատգամաւորները, լայն սրահի մը մէջ ուր պիտի սպասէին Մամիկոնեան Պայազատին:

Սրահը իր նահապետական լըջու-թեան մէջ ճաշակաւոր ճոխութիւն մը ունէր, յատակները դարգաբուսած հայկական դորգերով, ձեղունը ոսկեդրուող, իսկ պատի վրայ նկարուած էին Մամիկոնեաններու դէմքեր, հին զէնքեր ու յաղթած դրօշակներ:

Նրբաքանդակ դռները բացուեցան, հարուստ համազգեստով 24 զինուորականներ բռնեցին բարձր գահի մը շուրջը, անոնց ետեւէն եկաւ Սասնոյ սպարապետը Կարպիս, ապա Տարօնի արծիւը Թոսնիկ պարզ զինուորականի հագուստով: Երեք անգամ մինչեւ գետին խոնարհելով ողջունեցին Մամիկոնեանց տէրը երեք զեապանները, Ամբր Բափեր Մարտինի ամիրան, Պորփիւր Սամոսատի իշխանը, Վարդ Բիւզանդիոնի բախտախնդիր հերոսը:

— Սագազութի՞ւն թէ պատերազմ:  
Առաջին խօսքն եղաւ հայ զօրավարին:

— Քու ձեռքդ է խաղաղութիւն եւ պատերազմ, ըսաւ Մարտինի Ամիրան:  
Մենք զեապաններն ենք այն քաջին որուն սուրը հրեղէն է եւ բարկութիւնը դիւային: Ահա գաշինքը Աւետարանի եւ Սուրբ վրայ իր պատուոյ եւ հաւատքի երդումը եթէ դու զինքը ճանչնաս քու տէրդ ու հնազանդիս իրեն:

Թոսնիկ կարգաց մագաղաթը, մթնեցաւ երեսը, գայն կտոր կտոր ըրաւ բարկութեամբ: Ո՞վ է այդ, Փիլարէտը որուն պէտք է հնազանդիմ, երբեք իր քաջի անունը չեմ լսած:



— Քու աղգէդ ու քու ցեղէդ է, ըսաւ Ամիրան, լաւ հայերէնով: Փիրալէտ այն քաջն է որ տիրած է Եփրատէն մինչև Գոնիա, անոր հարկ կուտան բազմաթիւ թագաւորներ, եւ Բիւզանդիոն կը դողայ իր շքեղ պալատներուն մէջ:

— Երբեք այդ աւագակին երեսը չեմ ուզեր տեսնել, ըսաւ Մամիկոնեանը. բարեկամութիւնը սիրով կարելի է փոխանակել, սէրը բարեկամութեամբ, բայց ազատութիւնը գերութեան հետ փոխել, այս բերդերը երբեք չեն ըներ, գացէք պատմեցէք ձեր հաւատուրաց հայազգի տիրոջ:

— Սակայն մեր տէրը մէկ օրուան մէջ քարուքանդ կրնայ ընել բոյնդ եւ երկիրդ, ջարդել, սպաննել կին ու տղայ, կրնայ մարտիս պէս շորցնել երկնամերձ լեռներդ ու ցորենուտ դաշտերդ, իմ երկիրս ալ այսպէս գեղեցիկ էր եւ ուրախ, բայց այժմ ոչ մէկ ծուխ կը բարձրանայ բուխերիկներէն, ըսաւ Ամիրան տխուր յիշատակով:

— Քանի՞ հազար են ձեր տիրոջ զինուորները այս սարերը բռնելու:

— Ո՞վ գիտէ անոնց թիւը, ըսաւ Ամիրան:

— Ես հազար ծիաւոր ունիմ, որոնք հաւատքով վառուած, որոնք աստուածներ են, որովհետեւ ամէն օր Աստուծոյ մարմնով ու արիւնով կը սնանին, իսկ քու տէրդ գիտեմ որ անհաւատ է, չարագործ՝ ինքն, եւ իր զինուորները: Աւելի կ'ընտրեմ այս բերդերուն տակ մեռնիլ քան ուրացողի մը գերին ըլլալ:

— Հայրին, տես զինուոր կը խաղամ, յանկարծ սրահը մտաւ եօթնամեայ աղեկ մը այնքան համարձակ ու վառվառն, որ Ամիրային զարմանք աղղեց, ընհանուրին ծիծաղ... ու կարծիր եւ յոգնած նետուեցաւ Թոռնիկի զէրկը, երկու մութ դէմքերուն մէջ բացուող աստղի մը պէս:

— Տես, Ամիրայ, ըսաւ Թոռնիկ, տրդնէին թեւը բռնելով, քանի՞ Թոռնիկներ կան այս սարերուն փառքն ու ազատութիւնը պաշտպանող:

Մանկիկը ծիծաղկոտ գնաց զինուոր խազալու:

Թոռնիկի դէմքը անոյշ կարմրութիւն մը առած էր. անխուով կերպարանքը խոր ժտածութիւններ կը ծածկէր, պատկասանք ու վախ աղղելով շուրջիններուն:

— Ուրիշ ոչինչ ունիմ ձեզ բռնու. ձեր տիրոջ նուէրները իրեն կը դարձնեմ, վաղը գանոնք սրով ասնելու:

Յետոյ բարձրացուց գետնաները Աստղներդի բարձրագոյն աշտարակը, ցոյց տուաւ արէծուփ լեռներն եւ անհուն դաշտերը որոնց վրայ դունապեղ տարածուած էին գիւղեր ու գմբէթներ:

Որչափ այս ժողովուրդը կապուած է իր հողին եւ լեռան, այս տեղերէն ոչ մէկ արծիւ կ'անցնի, ո՞վ Ամիրայ:

Հետուններէն կը հնչէր հնձուորներու ուրախ երգը յուլիսի տաք արեւուն տակ: Պահակը ծանր դոփիւնով կը քալէր. գրմբէթները կ'աղօթէին, երջանիկ էր ամբողջ Սասունը:

ՎԱՆԱՏՈՒՐ

(Շարունակելի)

ՄՐՅՄԱՆ ՀՐԱԽԷՐ

« ՀԱՅ ՍԿԱՌԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

« Հ. Մ. Ը. Մ. »-ի Ալֆօրվիլի Մ-ճիւղի Սկաուտի խումբս, « Հայ Սկաուտ »-ի Ա. թիւէն հարիւր հատ սպասած ըլլալով, այսու հրապարակաւ մրցման կը հրաւիրէ, Փարիզի եւ Պուա - Քոլոնպի քոյր Մ-ճիւղերու Սկաուտ խումբերը, խոստանալով սպասել 150 հատ:

« Հ. Մ. Ը. Մ. »-ի Ալֆօրվիլի Մ-ճիւղի Սկաուտ. Տեղական Խորհուրդ

Սելամիկի գործակալ նշանակուած է՝ Եղբայր Վ. ԱՐՇԱԻՐ  
2, Rue Ermu, Salonique. (Grèce).

Աթէնքի գործակալ նշանակուած է՝ Եղբայր ԵՊՈՒԱՐԴ ՍԱՓՐԻՉԵԱՆ  
7 Rue Capodistruco. Campagne Abézar. Piré. (Grèce).



# ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## ԼՈՒՐԵՐ Պ. Բ. ԷՆ

Երկար ու ծանր հիւանդութենէ եւ մտահոգիչ երկու գործողութիւններէ վերջ, սկառաւորիցի հիմնադիրը Կիլիկի Պէյտըն - Բաուէլը, ապաքինման շրջանի մէջ մտած է: Հ. Մ. Ը. Մ. եան սկառաւորներս, վերջնական ապաքինում կը մաղթենք յարգելի Պետին:

1935-ի յունուարին Համա - Սաղազականեան ընդհ. նամբարը տեղի պիտի ունենայ Մէլպուրնի մէջ, ուր՝ պիտի նախագահէ Պ. Բ. Էն:



Վերջերս, Տիկին Պ. Բ. Պետը, իրենց երկու աղջիկները բարձրաստիճան ու ազնուական անձնաւորութեանց ընկերակցութեամբ, 750 անգլիացի պետ եւ ուսիւններ մեկնեցան Անգլիայէն, մասնակցելու Համար Համա - Սաղազականեան ճամբարին, այս առթիւ ճամբու ընթացքին կանգ առին Վիլֆրանշի ծովափին վրայ. Քրանսական երեք միութեանց կողմէ իրենց եղած հիւրընկալութեան պատասխանելով: Քարափին վրայ հարիւրաւոր գայլիկներ, ծիծեռնակներ, արեւուջներ,

սկառաւորներ, երէցներ եւ Քրանսական երեք միութենէն խմբակ մը պետեր, դըլխաւորութեամբ Քրանսայի միջազգային պետ Մարթին բարի դալուստ մաղթեցին սկառաւոր հիմնադիր - պետին (որ դեռ ստիպուած է իր երկայն աթոռին վրայ հանգչիլ) իր պարագաներուն եւ ընկերակիցներուն:

Երկու օր անընդհատ ճաշ, չայ, ճառ ու պատյաներէ վերջ դէպի Նիս, Գան, Կրաս, եւ այլն. հրաժեշտի նշանը արուեցաւ եւ հսկայ « Ատրիաթիք » հեռաւոր հորիզոնին վրայ կորսուեցաւ, տանելով սկառաւորական այդ եղբայրակցութեան բանակը՝ դէպի Մալթա եւ հոնկէ ուրիշ ամեր:



Համա - Սաղազականի ճամբարէն վերադարձին Պ. Բ. եւ իր ընկերակիցները՝ հաւանաբար այցելեն Հիւսիսային Քրանսա եւ Պելճիքա:



« Հայ Սկառաւոր » յարգելի Պետին եւ իր ընկերակիցներով բարի ճանապարհ եւ սկառաւորական եղբայրութեան շղթային, ամբապնդում կը մաղթէ:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի Ֆիզկուլտուրայի Գերագոյն Խորհուրդը յտաջիկայ դարնան եւ ամառուայ եղանակներու առթիւ կազմակերպած է հետեւեալ խաղ - մրցումները:

Ապրիլ. — Պատգէթիոյի համահայաստանեան մրցումներ Լենինականի մէջ: Անգրիկովկասեան մրցումներ Պաքուի մէջ: Համամիութեանական մրցումներ Քիէվի մէջ: Ըմբշամարտ՝ Ղարաքիլիսէի մէջ, մասնակցութեամբ Վրաստանի ըմբշտաներուն: Որսորդական համահայաստանեան մրցումներ Երեւանի մէջ:

Մայիս. — Համահայաստանեան ծանրը Աթլէթիք եւ մարմնամարզական մրցումներ Երեւանի մէջ:

Յունիս. — Թէնիսի համահայաստանեան մրցումներ Երեւանի եւ Լենինականի մէջ:

Շանր Աթլէթիք Անգրիկովկասեան մրցումներ Գանձակի (Ատրպէյճան) մէջ:

Յուլիս. — Լողալու եւ հեծելանիւի համահայաստանեան մրցումներ Երեւանի մէջ, մասնակցութեամբ Պապուի եւ Պաթումի լուղորդներու եւ Լենինկրատի (Փեթրոկրատ) լուաղոյն հեծելանորդներու:

Օգոստոս. — Յուլիսիոյի համահայաստանեան մրցումներ Երեւանի մէջ:



մանակցութեամբ Մոսկուայի եւ Լենինականի ֆուտպոլիստներու: Ձիարչաւի՝ Արագածի քիւրզերու մանակցութեամբ: Սեպտեմբեր. — Չանգուածային արշաւանքներ՝ Լենինական, Ղարաքիլիսէ, Երևան, եւ այլն:

Հոկտեմբեր. — Հայաստանի բարձրագոյն վարժարաններու միջ - գպրոցական մրցումներ:

— 00 —

### ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՅԱՆ ՍԵՒԱՆԱՅ ՄԷՁ

Համաժիութենական Ֆիզկուլտուրայի Գերագոյն Պորճուրդը Հայաստան առաքած է մարզարանի շինութեանց մասնագէտներէ բաղկացեալ խմբակ մը ճարտարապետ Չփերենցիի գլխաւորութեամբ: Այս խմբակի պաշտօնն է քննել Անդրկովկասի մարզարաններու արդի վիճակը: Առաքելութեան անդամները արդէն իսկ այցելած են Լենինական, Ղարաքիլիսէ, Ղազպատ լիճը, Չանգու գետը եւ Սեւան:

Սեւանի լիճը մասնաւորապէս մեծ տպաւորութիւն թողած է ճարտարապետներու վրայ:

Կը խորհուրի Սեւանի մէջ հաստատել Համաժիութենական մարզական կայան մը, աչքի առաջ ունենալով Սեւանայ լճի ու շրջակայքի ունեցած յարմարութիւնները: Նախատեսուած է կէս միլիոն ծախս:

Պորճուրդային Հայաստանի Ֆիզկուլտի Գերագոյն Պորճուրդի որոշումով Երևանի, Լենինականի Ղարաքիլիսէի մէջ պիտի կառուցուի արդիական մարզարաններ: 300,000 ռուբլի վարկ մը բացուած է շինութեանց ծախսերու համար:

Որոշուած է նոյնպէս Պորճուրդային Հայաստանի զործարաններու կից հիմնել մարզարաններ եւս:

### ՄԱՆԿԱԿԱՆ ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐ

Հայաստան հանուած են 20 մանկական ինքնաշարժեր ու բաշխուած են Երևանի, Լենինականի, Ղարաքիլիսէի մանկապարտէզներուն: Մանուկները իրենց ինքնաշարժերով մաշրաքաղաքի գլխաւոր պողոտայի վրայ անցք մը կատարած են: Ինքնաշարժերու արժէքն է 430 ռուբլի:

### ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ ՄԱՐՍԷՅՈՒ ՄԷՁ



Բ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ



ՃԱՇԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ



ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՑՈՒՄ

Մարտ 30-ին, Երևանի քաղաքային մարզարանին մէջ տեղի ունեցած է ֆուտբոլի ընկերական հանդիպում - մրցում

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՐԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՆԱԼ ԵԱՀԱՆՔՆԵՐՈՒ ՍԿԱՌՏՆԵՐԷՆ

Միացեալ Նահանգներու Նախագահ Պ. Ռուզվելթ անթերիով կոչ մը ուղղած էր, փետրուար 1-ին իր երկրի բոլոր սկաուտներուն, այդ ամիսը՝ ազգային բարի գործի մը յատկացներու համար: Մօտ մէկ միլիոն ամերիկեան սկաուտներ, պատաս-

ժը, Շինարարական Էնսթիթիուտի եւ տեղական ստիկանութեան թիւերու միջեւ: Մրցումը վերջացած է ստիկաններու յաղթանակով՝ 2 - 1-ով:

Խաներով յարգելի Նախագահին կոչին, մէկ ամիս անընդհատ բոլոր երկրին մէջ տունէ տուն այցելելով հսկայական հագուստեղէն եւ այլ առարկաներ հաւաքած են, այդպէսով, ծովածաւալ թշուառութեան մը պաշտպան հանդիսացան, խիստ ձմրան միլիոնով չքաւորներ պատասպարելով:

Հ.Մ.Ը.Մ. Ի ԴԻԻԱՆԷՆ

Պատ. Երջանային վարչութիւն « Հ. Մ. Ը. Մ. » Ի Սուրբիոյ Երջանի Պէշրուք

Սիրելի եղբայրներ,

Համաձայն Հ. Մ. Ը. Մ. Ի Սկաուտի վերին Մարմնոյ հրահանգին, Միու-թեանս օրաշատնաթերթի յունիս 15-ի թիւը առանձնապէս Ձեր շրջանին համար արամադրուած է:

Արդ, կը խնդրենք որ հաճիք մինչեւ յունիսի 5-ը մեզ ուղարկել խմբադրական, յօդուած, նկար, եւ այլն:

Եղբայրական ողջոյններով Խմբագրութիւն ՀԱՅ ՍԿԱՌՏ-Ի

Թիւ 24

Սաօ - Բօլօ (Պրագիլ) 29 - 3 - 1934

Սիրելի եղբայրներ,

... Անհուն ուրախութեամբ ստացանք ձեր նամակը, որ մեզ սթափեցուց ու ցնցեց:

Լրջօրէն կ'ուսումնասիրենք տար հարցումներու պատասխանը. չենք ուշացներ: Կը սպասենք ձեր յանկուցիչ հրահանգներուն:

Թերթի վերհրատարակումը սքանչելի գործ մըն է. կը շնորհաւորենք ձեր ջանքերը:

Ձեր ձեռնարկներուն ոչ միայն խաբով պիտի պատասխանենք այլ եւ մեր գործունէութեամբ պիտի ապացուցանենք թէ ձեր կողքին կանգնած ենք:

Կը յուսանք թէ այս անգամուայ աշ-

խատանքը պիտի գերազանցէ Հ. Մ. Ը. Մ. Ի անցեալը:

Յառաջ ուրեմն, « Հ. Մ. Ը. Մ. » Ի միջոցաւ հայրենիքի ու սերունդին համար:

Հ. Մ. Ը. Մ. Ի-եան բարեկերով Ի դիմաց Սաօ - Բօլոյի Մ-հիւղի (Կնիք) վարչութեան

Սիրելի Սկաուտներ,

Մեծ գոհունակութեամբ իմացայ Հայ Սկաուտ-ի վերհրատարակումը. ձեզ սրտանց կը շնորհաւորեմ եւ կը քաջալերեմ այդ նուիրական եւ բարձր ձեռնարկին մէջ: Իրրեւ հին սկաուտ մը եւ Հ. Մ. Ը. Մ. Ի-ական մը ամէն բանէ առաջ, կը խոստանամ անտարբեր չի մնալ եւ բերել իմ ալ աշխատութեանս համեստ բաժինը:

Ձգալի պակաս մըն էր իրապէս ամէնուս համար, կենսունակ միջոցը դիրար աւելի մօտիկէն ճանչնալու եւ տարածել սիրտ բարերար դերը ամէն հայ խաւերուն մէջ. այժմ վստահութիւնս շատ մեծ է ձեր վրայ. դուք միակ ներկայացուցիչը « Հայ Պալիլաներու », տէրը Հ. Մ. Ը. Մ. Ի-ն՝ ձեզմով միայն ան կրնայ վերակենդանանալ եւ ապրիլ:

Հպարտացէք, Հ. Մ. Ը. Մ. Ի-ը ձեր թարմ եւ եռանդուն ուժերուն վրայ դրած է իր միակ յոյսը եւ վստահութիւնը. ինչպէս ձեր նշանաբանը, ձեզմով դարձեալ անոր անունը կրնայ յուերժանալ:

Ձեր հեռուոր սկաուտ եղբայրներուն աւետիս, անոնք շատ ծարաւի են ձեր յուրերուն, գորացուցէք այդ միջոցը. խօսեցէք, պատմեցէք եւ պոսացէք մանուսնդ



թէ դուք կ'ապրիք եւ կ'ապրեցնէք Հ. Մ. Ը. Մ. ր:

Միշտ յառաջ, գլուխնիդ խիզախ եւ խանդավառ. Հ. Մ. Ը. Մ. ի անունը պէտք է տարածէք հայ աշխարհին, վառ պահելու անոր անունը յոգնած ու թմրած սրբանուն մէջ: Ուր որ ալ ըլլաք, ուր որ ալ երթաք, անոր շարքերուն մէջ միայն պիտի գործէք ձեր իրական ընկերը. պիտի

սիրէք զայն օրասնց երբ իրապէս զգաք ձեր հոգիին խորը:

Երախտապիտական զգացումով առգորուած՝ անդամներ կը մնանք միշտ Հ. Մ. Ը. Մ. ի եւ եղբայրներ իրարու սիրելի սկսուածներ:

Գ. ՉԱՔԸՃԵԱՆ

Փարիզ, 30 մարտ 1934

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ակսինք փութալով քանի որ խմբական խաղերուն առաջինն է որ կըրցած է հրապուրել մարզիկներն ու համակիրները:

Անգլիոյ ախոյեանութեան մէջ Սրբնալ ապրիլ 7ին յաղթելով Հըրըրսֆիլտի գլուած է առաջին տեղը եւ կը կարծուի որ վերջնական յաղթանակ տանի:

Աւստրիական «Ատմիրա»ն որ Տանըմարքա պտոյտի է ելած պարտութեան մտանած է Գօրէնիակի խումբը 3—1ով եւ հաւասար մնացած Տանըմարքայի ազգային խումբին հետ 2—2ով: Շուէտական Ա. Ժ. Սքօգհոլմ խումբը Պէրլին այցելութեան շահած է Թէնիս Պօրուսիա գերման խումբին դէմ իրը մրցում 3—1ով:

Ֆրանսայի բրօֆէսիօնէլ ախոյեանութեան առաջին տեղը կը գրաւէ Ֆ. Բ. Սէքըր եւ երկրորդ տեղը Օլիմպիք տը Մարսէլը: Այս երկու խումբերը ասկէ զատ պիտի մրցին իրարու դէմ մայիս վեցին Ազգային Բաժակի վերջնական մրցումին, նախորդ կերակի յաղթած ըլլալով Լիլի եւ Ռուպէի խումբերուն երկուքն ալ 1—0ով:

Երկրորդ դասակարգի ախոյեանութիւնը կը շարունակուի, առ այժմ Միւլհուզի խումբը, Փարիզեան Ռէտ-Սքարը եւ Սէն Բէքիէն կը գրաւեն առաջին տեղերը:

Աշխարհի ախոյեանութեան համար կատարուած մրցումէ մը Հոլանտա յաղթական ելաւ Իրլանտայէն 5—2ով: Այսպէսով Իտալիոյ մէջ մօտերս կատարուելէ վերջընթեր մրցումներու մասնակցելու իրաւունք ստանալով:

Անցնինք Ռէկվիի, որ Փուլթալի քայրն է, հակառակ որ Փուլթալին ալ նուազ աղջիկներու խաղ է: Ռէկվիին թէպէտ կրօնիս ու վայրազ, սկսած է տարածուիլ սշխարհիս շորս անկիւնը բացի հայերու մէջ: Վերջերս Մուսոլինի հրամայած է, որ ազգային խաղ—սրօր— նկատուի յետ այսու: Տեսնենք արդիւնքները: Ֆրանսայի դանագան շերտերու (poule) մրցումներուն մէջ Թուլոն յաղթական Լիոննի 6—1ով. Բէրքիմեան յաղթական Բօի 11—6ով, Պայոն յղթ. Սքատ Թուլուզէնի 6—3ով եւ Մօնֆէրան յղթ. Վիէնի 10—3ով: Միջազգային նորութիւն չկայ:

Թէնիսը, Ժողովրդականացած խաղ մը ամէն մէկու մասշեղի եւ որ իր կարողութեան չափով կրնայ խաղալ չինացի 12 տարեկան ախոյեանուհի օր. ձեմ Լօսֆիմի եւ... Շուէտի ձերունի թագաւորը: Գարնանացին եղանակի հետ կը սկսի նաեւ թէնիսի եղանակը: Այս խաղի աշխարհի ախոյեանութիւնը համարուող Գուր-Տէվիսի (Coupe Davis) բաժակը որ Անգլիացիներու թաթին տակն է նախորդ տարիէն ի վեր, կը կարծեմ որ այս տարի ալ հոն մնայ: Ֆրանսայի եւ Ամերիկայի թիւ մէկ խաղացողները Գօշէ եւ վայնգ անցնելով բրօֆէսիօնէլ շարքերուն դիւրացուցին անգլիացիներու գործը: Այս շարթու ալ ճարտանցի թիւ 1 խաղացողը Ժիրօ-Սարօ անձնատպան եղաւ զինքը Եւրոպա բերող շոգենաւէն ծովը նետուելով: Արլիօնի դաւակները եթէ կատարեալ մարզիկներ եւ ճէնթըմէն չըլլային կրնային ուրախանալ:




Սպանիացիք այս շարքում զորք յաղթանակներ տարին շնորհիւ իրենց Մայերի, յաղթելով նախ Վիեննայի խումբին 3-ի զէմ 2-ով, ապա Իտալիոյ Պալոնիայի խումբին 4 — 1-ով:

Արագ ակնարկ մը ՀԵՆՐԵՆԱՆԻԻ բաժնին վրայ: Պելճիբացիք «Մոնոբուլ» ըրած են այս տարի միջազգ. մրցումներու յաղթանակները: Փարիզ-Ռուպէ մրցումը — 256 քիլոմէթր շահեցաւ կասթօն Ռըպի 7 ժամ եւ 52 վայրկեանէն: Փարիզ — Պրիստէլ մրցման Ա. հանդիսացաւ Պօնտալէի կտրելով 393 քիլմ. հեռաւորութիւնը 11 ժամ 17 վայրկեանէն:

ՊԱՍՔԵԹ-ՊՕԼԻ մէջ Միլիտուրի Զուայէն եւ Լիլի Օլէմբիէի պիտի իյնայ ախոյեանութեան վերջին մրցումը կատարելու պատիւը:

ԿՌՄՓԱՄԱՐՏԻՆ գալով խճողուած զործունէութեան մը վրայ շատ արագ ակնարկ մը պիտի նետենք այս անգամ: Այ. Պրատն աշխարհի «աքլոր» ծանրութեան ախոյեանը ժընէվի մէջ նօք-առիթ ըրած է Չուիցերիոյ ախոյեան Տիւպուան Չըզ ոտունտին: Ծանճերու ծանրութեան Ֆրանսացի ախոյեան Անժէլման կրցաւ ստանել տիպոսը պարտութեան մասնելով Պարայէն: Միջազգային համազայնակցութիւնը որուն մօտ բողոքած էր Ֆրանսայի եւ Եւրոպայի ախոյեան Մարսէլ-Թիլէն պարտուող սպանիացի Ալարաւալաչտօնապէս Եւրոպայի ախոյեան յայտարարեց Ֆրանսացի մարզիկը:

Վերջացնենք ՀՕՔԷԻ արդիւնք մը արձանագրելով. հօլանտական ազգային խումբը զժուարաւ կրցաւ յաղթել Ֆրանսական խումբի 1-2ով:



Հայ Առաքելական Ս. Եկեղեցին կորսրնցուց իր երիցագոյն անդամը՝ Տէր ՄՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, նաեւ կին ժողովրդանուէր Առաջնորդ Նիկոմիթիոյ Թեմին:

Հանգուցեալ Սրբազան Հայրը 1922էն ի վեր կը վարէր Պուլկարիոյ Թեմը, առաջնորդական Ս. Աքօռը հաստատած ըլլալով Սօփիայի մէջ, ուրտեղ եւ մահացաւ:

Իր քահանայագործութեան 60 տարիներու ընթացքին, իր Թեմին մէջ շինած ու կառուցած է գիւղեր, բաղնիքներ, ազբիւրներ ու դպրոցներ եւ այլն: Մեծ եղեռնի օրերուն ախտորուած է իր հօտին հետ:

Մեռած է յետին քշուառութեան մէջ ... :

Յարգա՛նք իր քարմ շիրիմին, հանգիստ իր ոսկորներուն:

ՈՂԲԱՑԵԱԼ ՍԵՂԱ ՅԱԿՈՒԵԱՆԻ Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Յառաջիկայ կիրակի մայիս 6-ին տեղի կ'ունենայ Ազգային Պետի տարաքալտ աղջկան Սեդա Յակոբեանի մահուան քառասունհինգեանգատեան արարողութիւնը, ժամ — կուժոնի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ մէջ:

Ընդհ. Պատգմ. ժողովի նախագահ՝ Տիար Օհանեան, Սկաուտական վերին Մարմինը, Ֆրանսայի Շրջանային վարչութիւնը կը հրաւիրեն բոլոր Հ. Մ. Ը. Մ. ականները իրենց ներկայութեամբ յարգելու քոյր Սեդայի յիշատակը, եւ յայտնելու իրենց համակրանքը վշտահար ծնողքին եւ իր պարագաներուն:

Յառով կը յայտնենք մեր Անկէնի (Փարիզ) Խմբապետ Եղբայր Հայկ Մերկերեանի եւ տիկնոջ նորածինին մահը:

Մեր Եղբօրն ու իր պարագաներուն, « Հայ Սկաուտ » ին խորին ցաւակցուքիւնները:



ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐԻ ԲԱԼԵՏԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Սրբազան Վերին Մարմինը ընդատմել է և իր ցուցման համաձայնությամբ  
 ցանկություն իրեն կից հիմնում է Հ. Ա. Ա. Երանանդանի Բալետային խումբը:  
 Ստորև կուսանք ցանկը: —

Բ. ԵՂՅԱՆ

- |                  |                  |
|------------------|------------------|
| ՊՊ. Ա. Իննէեան   | Շ. Իննէեան       |
| Ն. Համբարձումեան | Բ. Կեղեցեան      |
| Գ. Քիրբեան       | Կ. Մանուկեան     |
| Գասախեան         | Ն. Պարսեան       |
| Տաթ. Կաննեան     | Ս. Կանյան        |
| Փ. Էմիրխանեան    | Այ. Չ. Մանուկեան |

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ԲԱԼԵՏԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ  
 ՓՈՒԿԱՆ ԱՑԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Կնարեանեան Սուրբն	25 ֆրանկ	Սարգիսեան	25 ֆրանկ
Բիշմեան Բ.	25 ֆրանկ	Սարգիսեան Հ.	25 ֆրանկ
Տարխանեան Ա.	25 ֆրանկ	Քաջիսեան Բ.	25 ֆրանկ
Կեղեան Հ.	25 ֆրանկ		

Ս Ս Ա Յ Ա Ն Ք

« ԵՆԱՀԻՏ »-ի հանդէս մասնաժամն եւ  
 արուեստի: Խմբագիր՝ Արշակ Չոպան-  
 եան: Ե. Տարի, թիւ 3 - 4:



---

ՀԱՅ ՄԱՍՈՒ ՏՅԱՆԸ ՇՐՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԶՄԱՆԵՐՊՈՒԱԾ ԲԱՐԻՁԻ ՍԿԱՌԻՏԱ-  
ԿԱՆ ԿՈՒՄԻՏԵ ԿՈՒՄԵ, 13 ՄԵՅԻՍ 1984 ԺԱՄԸ, 24 ՅՈՒՆ **Le Journal** Ի ՍՐԱՀԱՆ

ՔՐԶ. 100, Rue Richelieu

---

---

ԱՄՆԵՐԳԻ ՅՈՒ ԿԱՎՕ

ԳՈՒՐԳԻՆ ԱՆՔՄՇԱՀԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԳԵՍԻՆ

ԼԻՆԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅ ՄԵՆՈՒԳՈՅՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ

2 ՅՈՒՆԻՍ ԺԱՄԸ, 21-ԻՆ

---